



«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ 3-4 տարեկան երեխաների տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացումը

Դաստիարակ՝ Լուսինե Ավագյան

Մանկապարտեզ՝ «Ազատամուտ համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ

2022թ.

Բովանդակություն

Ներածություն	3
Գլուխ 1	5
Գլուխ 2	6
Եզրակացություն	9
Գրականության ցանկ	10

Ներածություն

Նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակության համակարգում բացառիկ կարևորություն ունի տարական մաթեմատիկական պատկերացումների զարգացումը:

3-4 տարեկան երեխաների ծրագիրն ապահովում է մաթեմատիկական պատկերացումների առավելագույն մատչելի ծավալ և խթանում է մտավոր զարգացման առաջընթացը:

Ծրագրի նպատակն է.

- Ձևավորել տարրական մաթեմատիկական նախաթվային պատկերացումներ՝ քանակ, մեծություն, ձև և տարածության ու ժամանակի մեջ կոմնորոշում:
- Ձևավորել առարկաների 2 խմբին առդրման և վերադրման եղանակով համեմատելու հմտություն:
- Ձևավորել դիդակտիկ նյութերով աշխատելու ցանկություն:
- Մշակել ուսումնական գործընթացի նկատմամբ հետաքրքրություն:
- Տարբեր զգայարանների զարգացում:
- Ինքնուրույն գործունեության զարգացում:

Խնդիրները

- ✓ Սովորեցնել դիտել և տեսնել միատեսակ առարկաների խմբեր, դրանք բաժանել առանձին առարկաների:
- ✓ Սովորեցնել տարբերել «շատ» «մեկ», «ոչ մի» բառերի իմաստը: Հասկանալ «որքան է», հարցադրման իմաստը:
- ✓ Սովորեցնել համեմատել և տարբերակել 2 հավասարաթիվ և անհավասար խմբերի քանակական հարաբերություններ՝ առարկաները իրար վրա դնելու և մոտեցնելու ճանապարհով: Օգտվել «շատ է», «քիչ է», «այնքան է», «որքան» արտահայտություններից:
- ✓ Սովորեցնել 3 հիմնական գույները՝ կարմիր, կապույտ, դեղին:

Տես՝ Մանկապարտեզի կրտսեր 2-րդ խմբի (3-4 տարեկանների) կրթական համալիր

ծրագիր: Երևան 2011

Խաղի կանոնությունը նախադպրոցական երեխաների տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացման գործում

Տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորման և զարգացման միջոցներն են՝ դիդակտիկ, զարգացնող, մրցակցային, ինտելեկտուալ խաղերը, զբոսանքները:

Երեխաները սովորում են միայն խաղալով: Մաթեմատիկական բովանդակությամբ յուրաքանչյուր խաղ ունի իր խնդիրը՝ զարգացնել բանավոր համրանքը:

Խաղերի ընթացքում երեխաները համեմատում, վերլուծում են: 3-6 տարեկան երեխաներն ունեն կոնկրետ մտածողություն, ուստի նրանք սկսում են ըմբռնել մաթեմատիկական հիմնական հասկացությունները, երբ ուղղակիորեն շփման մեջ են մտնում իրենց շրջապատող իրական առարկաների հետ:

[Տես՝ 3-6 տարեկան երեխաների կրթական ծառայությունների կազմակերպումն այլընտրանքային մոդելներով: Երևան 2018, էջ 68]

Հետազոտական աշխատանքի թեման է՝ 3-4 տարեկան երեխաների տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացումը: Այս թեման ինձ համար կարևոր է նրանով, որ այսօր առանց մաթեմատիկայի հնարավոր չէ մարդկության առաջընթացը: Սերմանենք սեր առարկայի նկատմամբ, նպաստենք երեխայի մտավոր ունակությունների զարգացմանը:

Հետազոտական աշխատանքի նպատակն է պարապմունքի ընթացքում դիդակտիկ պարագաների կիրառմամբ՝ երեխաների մոտ ամրապնդել «ոչ մի», «շատ», «մեկ» հասկացությունները:

Հետազոտական աշխատանքի վարկածն է՝ դիդակտիկ պարագաների կիրառումը պարապմունքի ընթացքում՝ թույլ կտա ներառել բոլոր երեխաներին, ինչպես նաև ուսումնական նյութը դարձնել ավելի հետաքրքիր:

Հետազոտական աշխատանքը իրականացվել է «Ազատամուտ համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կրտսեր 2-րդ խմբում:

Գլուխ 1

Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացման պարապմունքի ընթացքում զրույցների օգնությամբ անհրաժեշտ է պարզել երեխաների մաթեմատիկական պատկերացման մակարդակը, ստեղծել առարկայական զարգացնող միջավայր՝ հրավիրելով նրանց ուշադրությունը խաղի, տարատեսակ դիդակտիկ նյութերի, քանակական հարաբերությունների, չափերի ու գույնի վրա: Օգնել երեխաներին տիրապետելու, խաղալիքների հետ գործողություն կատարելու եղանակներին, խաղալ ցանկալի միջավայրում՝ առանց ստիպելու և գերծանրաբեռնվածության, խաղային ձևով զարգացնել մաթեմատիկական պարզ հասկացությունները: Շատ կարևոր է միմյանց նկատմամբ վստահություն ցուցաբերելու անհրաժեշտությունը: Դժվարանալու դեպքում աջակցել ավելի հեշտ առաջադրանքներ տալով, հետո բարդացնել՝ ելնելով յուրացրած կարողություններից:

[Տես՝ Հռիփսիմե Հարությունյան, Մաթեմատիկայի պարապմունքները մանկապարտեզում Ուսումնական ձեռնարկ: Զանգակ հրատարակչություն: Երևան 2016, էջ 6]:

Մաթեմատիկական պետք է սիրել թեկուզ նրա համար , որ կարգի է բերում միտքը: Մ.Վ. Լոմոնոսով

Մաթեմատիկական գեղեցիկի նույնպիսի արարում է, ինչպիսին գեղանկարչի կամ բանաստեղծի ստեղծագործությունը: Գույնի և բառերի համապատասխանության նմանությամբ՝ մտքերի համախմբությունը պետք է օժտված լինի ներքին ներդաշնակությամբ: Գ. Հարդի

Երեխան սովորում է այն, ինչ իրեն շրջապատում է: Մարիա Մոնտեսորի

3-4 տարեկանն ամենակարևոր շրջանն է անձի կայացման համար, այն կախված է երեխայի շրջապատող ֆիզիկական և սոցիալական միջավայրից: Այս տարիքում երեխան արդեն ունակ է ճանաչելու առարկաների տարբերությունը և նմանությունը ելնելով նրանց առանձնահատկություններից:

Գլուխ 2. Հետազոտության ընթացք

Հետազոտական աշխատանքի շրջանակում պարապունքի ընթացքում կկազմակերպեն կիրականացնեն խաղ.

Թեմա՝ Ծանոթացում «մեկ», «շատ» և «ոչ մի» քանակական պատկերացումներին:

Խնդիրները՝

- Խաղի ընթացքում երեխաների մոտ զարգացնել տեսողական կարողությունը:
- Գործնականորեն ընդգրկել բոլոր երեխաներին խաղի մեջ, նպատակ ունենալով խաղի միջոցով զարգացնել նրանց մոտ «մեկ», «շատ» և «ոչ մի» հասկացությունների տարբերությունը:
- Երեխաներին բացատրել «քանի» և «որքան» հարցերի իմաստը:

Անհրաժեշտ պարագաներ

Ցուցադրական՝ զամբյուղ, տիկնիկ

Բաշխիչ՝ նույն գույնի և մեծության գնդակներ (երեխաների թվին համապատասխան):

Տիկնիկի օգնությամբ սեղանին դնել գնդակներով լի զամբյուղ, հարցնել

- Քանի՞ զամբյուղ է բերել տիկնիկը - (մեկ)

- Զամբյուղի մեջ քանի՞ գնդակ կա - (շատ)

- Ի՞նչ գույն ունեն գնդակները

Առաջարկել վերցնել մեկ գնդակ: Հերթականությամբ դիմել երեխաներին:

- Դուք քանի՞ գնդակ վերցրիք - (մեկ)

- Զամբյուղում քանի գնդակ կա - (ոչ մի)

- Ի՞նչ պեղք է անել, որպեսզի զամբյուղի մեջ նորից գնդակներ լինեն:

Հանձնարարել երեխաներին նորից գնդակները դնել զամբյուղի մեջ:

- Դու քանի՞ գնդակ դրեցիր: Զամբյուղի մեջ քանի՞ գնդակ եղավ - (շատ գնդակներ), իսկ քե՞զ մոտ - (ոչ մի):

Յուրաքանչյուր առաջադրանքից հետո հաստատել երեխաների պատասխանները՝ առարկայի քանակը կապել առարկայի անվան հետ: Օրինակ՝ ճի՞շտ է, որ զամբյուղի մեջ շատ գնդակներ կային, իսկ հիմա ոչ մի գնդակ չմնաց:

Խաղի ընթացքում անհրաժեշտ է խրախուսել երեխաների կատարած աշխատանքը:



Դիտարկման խմբի անդամների կարծիքները՝

- պարապմունքը նպատակաուղղված էր մաթեմատիկական և տեխնիկական, ճանաչողական և մոտիվացիոն, ինքնաճանաչողական և սոցիալական, լեզվական և հաղորդակցական կարողունակությունների զարգացմանը: Պարապմունքի ընթացքում դաստիարակը կարողացավ հասնել պարապմունքի նպատակներին:
- Սաները պարապմունքի ընթացքում ազատ էին, անկաշկանդ և մոտիվացված: Պարապմունքի իրականացման ընթացքում դաստիարակը պատրաստել էր

խաղային միջավայր և համապատասխան դիդակտիկ պարագաներ:

- Նախադպրոցական տարիքի երեխայի ակնկալվող կարողունակություններից է մաթեմատիկական և տեխնիկական կարողունակությունը: Համաձայն նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշի՝ երեխան պետք է կարողանա տիրապետել նախաթվային և թվային հասկացություններին, կարողանա որոշել առարկաների քանակը, համեմատել դրանք ըստ մեծության, չափի, ձևի և այլն: Ուստի, դաստիարակի կողմից հետազոտվող թեման անչափ կարևոր է նախադպրոցական կրթության բնագավառում, քանի որ այն միտված է երեխաների կարողունակությունների զարգացմանը, տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորմանը:

Եզրակացություն

Գործնականորեն կիրառելով այս խաղը՝ ես հասա իմ վերջնաարդյունքին՝ այն է

. ճանաչելի դարձնել «մեկ», «շատ» և «ոչ մի» հասկացությունները

. ընդգրկելով բոլոր երեխաներին խաղի մեջ, նրանք կարողացան տարբերակել «քանի» կամ «որքան է» հարցերի իմաստը:

Գրականության ցանկ

1. 3-6 տարեկան երեխաների կրթական ծառայությունների կազմակերպումն այլընտրանքային մոդելներով: Երևան 2018, 196 էջ:
2. Հռիփսիմե Հարությունյան, Մաթեմատիկայի պարապունքները մանկապարտեզում Ուսումնական ձեռնարկ: Զանգակ հրատարակչություն: Երևան 2016 թ., 177էջ
3. Մանկապարտեզի կրտսեր 2-րդ խմբի (3-4 տարեկանների) կրթական համալիր ծրագիր: Երևան 2011, 168 էջ: